

Խորհրդի 1990 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 90/641/Եվրատոմ հրահանգ

Հսկման գոտիներում իրենց աշխատանքների ընթացքում իոնացնող ճառագայթման վտանգին ենթակա դրսի աշխատողների՝ աշխատանքների ժամանակ պաշտպանության մասին

Պաշտոնական տեղեկագիր L 349 , 13/12/1990 P. 0021 – 0025

Ֆիննական հատուկ հրատարակություն Գլուխ 15 Հատոր 10 P. 0013

Շվեդական հատուկ հրատարակություն՝ Գլուխ 15, Հատոր 10 P. 0013

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 31-րդ և 32-րդ հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը, որը ներկայացվել է ինչպես սահմանված է Պայմանագրի 31-րդ հոդվածով սահմանված անդամ պետություններում գիտական փորձագետներից Գիտատեխնիկական հարցերով կոմիտեի կողմից նշանակված անձանց խմբի հետ խորհրդակցելուց հետո,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական կոմիտեի եզրակացությունը (2),

քանի որ Պայմանագրի 2 (բ) հոդվածով նախատեսվում է, որ Համայնքը սահմանում է անվտանգության միասնական ստանդարտներ՝ պաշտպանելու համար աշխատողների և բնակչության առողջությունը և ապահովել, որ դրանք կիրառվեն Պայմանագրի II Վերնագրի III Գլխով սահմանված ընթացակարգի համաձայն,

քանի որ 1959 թվականի փետրվարի 2-ին Խորհուրդն ընդունել է թիվ 80/836/Եվրատոմ և (4) 84/467/Եվրատոմ (5) հրահանգներով փոփոխված իոնացնող ճառագայթումներից առաջացող վտանգների դեմ աշխատողների և բնակչության առողջության պաշտպանության համար հիմնական ստանդարտներ սահմանելու մասին հրահանգներ,

քանի որ 80/836/Եվրատոմ հրահանգի VI Վերնագրով սահմանված են վտանգի ենթարկված աշխատողների պաշտպանության՝ աշխատանքների ժամանակ պաշտպանությունը կարգավորող հիմնարար սկզբունքները,

քանի որ նշված Հրահանգի 40 (1)-ով նախատեսվում է, որ յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու վտանգի ենթարկված աշխատողների արդյունավետ պաշտպանությունը,

քանի որ նշված Հրահանգի 20-րդ և 23-րդ հոդվածով սահմանվում է աշխատանքային գոտիների դասակարգումը և վտանգի ենթարկված աշխատողների կատեգորիաները ըստ ճառագայթահարման մակարդակի,

քանի որ հսկման գոտիներում աշխատանքներ իրականացնող/կատարող աշխատողները, նշված 20-րդ և 23-րդ հոդվածների իմաստով, կարող են պատկանել օպերատորի անձնակազմին կամ դրսի աշխատողներին,

քանի որ նշված Հրահանգի 3-րդ հոդվածում նշված աշխատանքներին վերաբերող թիվ 80/836/Եվրատոմ հրահանգի 3-րդ հոդվածով նախատեսվում է, որ դրանց մասին անհրաժեշտ է զեկուցել կամ նախնական թույլտվություն ստանալ յուրաքանչյուր անդամ պետության կողմից որոշված դեպքերում,

քանի որ դրսի աշխատողները կարող են ենթարկվել իոնացնող ճառագայթման միանգամից մի քանի հսկման գոտիներում մեկ և միևնույն անդամ պետությունում կամ տարբեր անդամ պետություններում. քանի որ այս կոնկրետ աշխատանքային պայմաններով պահանջվում է համապատասխան ճառագայթային դիտանցման համակարգ,

քանի որ դրսի աշխատողների համար ճառագայթային դիտանցման համակարգով պետք է նախատեսվի պաշտպանություն համարժեք օպերատորի կողմից աշխատողներին առաջարկվող սահմանվածին՝ ընդհանուր դրույթների միջոցով,

քանի որ մինչ համայնքում միասնական համակարգի ներմուծումը հաշվի պետք է առնվեն դրսի աշխատողների համար ճառագայթային դիտանցման համակարգերը, որոնք կարող են գոյություն ունենալ/գործել անդամ պետություններում,

քանի որ օպտիմալացնելու համար դրսի աշխատողների պաշտպանությունը անհրաժեշտ է հստակ սահմանել դրսի/արտաքին ընկերությունների և օպերատորների պարտավորությունները՝ չհակասելով այն միջոցներին, որ դրսի աշխատողները պետք է ինքնուրույն ձեռնարկեն իրենց իսկ սեփական պաշտպանության համար,

քանի որ դրսի աշխատողների ճառագայթային պաշտպանության համար համակարգը նույնպես կիրառվում է արտաքին ընկերության կարգավիճակով ինքնագործ/ինքնազբաղ աշխատողի դեպքում,

ՎԵՐՆԱԳԻՐ 1

Նպատակը և սահմանումները

Հոդված 1

Սույն Հրահանգի նպատակն է լրացնել 80/836/Եվրատո հրահանգը՝ դրանով իսկ օպտիմալացնելով Համայնքի մակարդակով հսկման գոտիներում աշխատանքներ իրականացնող դրսի աշխատողների համար աշխատանքի ընթացքում պաշտպանությանն ուղղված միջոցառումները:

Հոդված 2

Սույն Հրահանգի նպատակներով՝

«հսկման գոտի» նշանակում է կոնկրետ կանոններով կարգավորվող ցանկացած տարածք իրնացնող ճառագայթման դեմ պաշտպանության նպատակներով և տարածք, որտեղ մուտքը հսկվում է, ինչպես սահմանված է սույն 80/836/Եվրատոմ Հրահանգի 20-րդ հոդվածով.

«օպերատոր» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով ազգային իրավունքի համաձայն պատասխանատու է հսկման գոտու համար, որտեղ իրականացվում է այն աշխատանքը, որի մասին անհրաժեշտ է զեկուցել թիվ 80/836/Եվրատոմ հրահանգի 3-րդ հոդվածի համաձայն.

«արտաքին ընկերություն» նշանակում է օպերատորից բացի ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, այդ թվում նաև նրա անձնակազմի անդամները, ովքեր հսկման գոտում կատարում են ցանկացած տեսակի աշխատանք.

«դրսի աշխատող» նշանակում է Ա կատեգորիայի ցանկացած աշխատող, ինչպես սահմանված է 80/836/Եվրատոմ հրահանգի 23-րդ հոդվածով, ովքեր հսկման գոտում կատարում են ցանկացած տեսակի աշխատանք, թե ժամանակավոր, թե մշտական աշխատող արտաքին ընկերությունում, այդ թվում նաև վերապատրաստվողներ, աշկերտներ

և ուսանողներ՝ նշված Հրահանգի 10-րդ հոդվածի իմաստով կամ թե որպես ինքնագրադ աշխատող ծառայություններ տրամադրող.

«ճառագայթային դիտանցման համակարգ» նշանակում է միջոցառումներ կիրառելու համար 80/836//Եվրատոմ հրահանգում սահմանված միջոցները և մասնավորապես վերջինիս VI բաժնում սահմանվածը, դրսի աշխատողների կողմից կատարվող աշխատանքների ժամանակ.

«աշխատողի կողմից կատարվող աշխատանքներ» նշանակում է հսկման գոտում դրսի աշխատողի կողմից տրամադրվող ծառայություն կամ ծառայություններ, որի համար օպերատորը պատասխանատու է:

ՎԵՐՆԱԳԻՐ II

Անդամ պետությունների իրավասու մարմինների պարտավորությունները

Հոդված 3

Յուրաքանչյուր անդամ պետություն կատարում է զեկուցմանը կամ նախնական լիազորության ենթակա դրսի ընկերությունների կողմից թիվ 80/836/Եվրատոմ հրահանգի 2-րդ հոդվածում նշված աշխատանքներ, ինչպես սահմանված է վերը նշված Հրահանգի II վերնագրի, մասնավորապես դրա 3-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 4

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ ճառագայթային դիտանցման համակարգը հնարավոր դարձնի աշխատողների համար նույն պաշտպանությունը, ինչ օպերատորի կողմից հիմնական հիմունքներով աշխատող աշխատողների համար:

2. Մինչ Համայնքի մակարդակով դրսի աշխատողների ճառագայթային պաշտպանության համար միասնական համակարգի ստեղծումը այնպիսի միջոցի ձեռնարկում, ինչպես օրինակ՝ համակարգչային կապ պետք է լինի՝

ա) անցումային հիմունքներով I Հավելվածում սահմանված ընդհանուր դրույթների համաձայն կենտրոնացված ազգային ցանցին կամ յուրաքանչյուր դրսի աշխատողին

առանձին ճառագայթային դիտանցման փաստաթղթի տրամադրում, որտեղ նույնպես կիրառվում են II Հավելվածի ընդհանուր դրույթները,

բ) միջսահմանային դրսի աշխատողների դեպքում և 2-րդ պարբերության իմաստով մինչ համակարգի ստեղծման ամսաթիվը՝ (ա) կետում նշված առանձին փաստաթղթի նկատմամբ:

ՎԵՐՆԱԳԻՐ III

Դրսի ընկերությունների և օպերատորների պարտավորությունները

Հոդված 5

Դրսի ընկերությունները՝ կամ ուղղակիորեն կամ օպերատորների հետ պայմանագրային պայմանավորվածությունների միջոցով, ապահովում են իրենց աշխատողների ճառագայթային պաշտպանությունը 80/836/Եվրատոմ հրահանգի III-ից VI վերնագրերի համապատասխան դրույթների համաձայն, և մասնավորապես՝

ա) ապահովելու համապատասխանությունը ընդհանուր սկզբունքներին և դրա 6-ից 11-րդ հոդվածներում նշված դրզաների սահմանափակումը,

բ) դրա 24-րդ հոդվածում նշված ճառագայթային պաշտպանության ոլորտում տեղեկություններ տրամադրել և վերապատրաստում անցկացնել,

գ) երաշխավորել, որ իրենց աշխատողները ենթարկվեն ճառագայթահարման գնահատման և բժշկական հսկողության՝ դրա 26-րդ և 28-ից 38-րդ հոդվածներում սահմանված պայմանների համաձայն,

դ) ապահովել, որ սույն Հրահանգի մաս II-ի I Հավելվածի իմաստով իրենց աշխատողներից յուրաքանչյուրի ճառագայթահարման առանձին դիտանցման ճառագայթային տվյալները արդիականացվեն ցանցերում և 4 (2)-րդ հոդվածում նշված առանձին փաստաթղթերում:

Հոդված 6

1. Այն հսկման գոտու օպերատորը, որտեղ դրսի աշխատողն իրականացնում է աշխատանքներ, պատասխանատու է ուղղակիորեն կամ պայմանագրային

պայմանավորվածությունների միջոցով իրենց ճառագայթային պաշտպանության աշխատանքային հայեցակետերի համար, որոնք ուղղակիորեն կապված են հսկման գոտու և աշխատանքների բնույթի հետ:

2. Մասնավորապես հսկման գոտում աշխատանքներ կատարող յուրաքանչյուր դրսի աշխատողի համար օպերատորը պետք է՝

ա) ստուգի, որ համապատասխան աշխատողը բժշկական զննության արդյունքում ճանաչվի պիտանի իրեն հանձնարարված աշխատանքը կատարելու համար,

բ) ապահովել, որ 5 (1) (բ) հոդվածում նշված ճառագայթային պաշտպանությունում հիմնական վերապատրաստումից բացի նա անցնի կոնկրետ վերապատրաստում հսկման գոտու ինչպես նաև աշխատանքների բնութագրերի մասով,

գ) ապահովել, որ նրան տրամադրվի անհրաժեշտ անհատական/անձնական պաշտպանության հարմարանք,

դ) նույնպես ապահովել, որ նա ենթարկվի առանձին ճառագայթահարման դիտանցման համարժեք աշխատանքների բնույթին և դոզաչափ աշխատանքային դիտանցման, որոնք կարող են անհրաժեշտ լինել,

ե) ապահովել համապատասխանությունը 80/836/Եվրատոմ հրահանգի 6-ից 11-րդ հոդվածներում նշված ընդհանուր սկզբունքներին և դոզաների սահմանաչափերին,

զ) ապահովել կամ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերի մասին՝ ապահովելու, որ յուրաքանչյուր աշխատանքից հետո III Մասի I Հավելվածի իմաստով դրսի յուրաքանչյուր աշխատողի անհատական/առանձին ճառագայթահարման դիտանցման ճառագայթային տվյալների յուրաքանչյուր աշխատանքից հետո զեկուցվի:

ՎԵՐՆԱԳԻՐ IV

Դրսի աշխատողների պարտավորությունները

Հոդված 7

Յուրաքանչյուր դրսի աշխատող պարտավոր է կատարել իր սեփական ներդրումը, ինչը կարող է նպաստել պաշտպանությանը, որ 4-րդ հոդվածում նշված ճառագայթային դիտանցման համակարգը կարող է ընձեռել նրան:

ԲԱԺԻՆ V.

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 8

1. Անդամ պետություններն ուժի մեջ են մտցնում սույն Հրահանգի համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքներ, կանոնակարգեր և վարչական դրույթներ ոչ ուշ, քան 1993թ. դեկտեմբերի 30-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:
2. Երբ անդամ պետություններն ընդունում են 1-ին պարբերությամբ նշված միջոցները, ապա դրանք պետք է պարունակեն սույն Հրահանգին կատարվող հղում կամ դրանց պաշտոնական հրապարակման պահին պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:
3. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ներպետական իրավունքի հիմնական դրույթները, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 9

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1990 թվականի դեկտեմբերի 4-ին: Խորհրդի կողմից՝ Նախագահ
Զ. ԴըՄիշելիս

ՀԱՎԵԼՎԱԾ I

I- ին ՄԱՍԻ 4 (2) ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՑԱՆՑԵՐԻ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Դրսի աշխատողների համար անդամ պետությունների ցանկացած ճառագայթային դիտանցման համակարգը պետք է բաղկացած լինի հետևյալ երեք բաժիններից՝

- դրսի աշխատողների նույնականացմանը վերաբերող մանրամասներ,
- մինչ ցանկացած աշխատանքի սկիզբը տրամադրվող մանրամասներ,
- մինչ ցանկացած աշխատանքի վերջը տրամադրվող մանրամասներ:

2. Անդամ պետությունների իրավասու մարմինները ձեռնարկում են միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ կանխելու ճառագայթային դիտանցման համակարգի ցանկացած կեղծումը կամ ապօրինի կեղծումը:

3. Դրսի աշխատողի նույնականացման մասին տվյալները նույնպես կարող են ներառել աշխատողի սեռը և ծննդյան ամսաթիվը:

ՄԱՍ II

Մինչ ցանկացած աշխատանք սկսելը օպերատորին կամ վերջինիս հաստատված բժշկին դրսի ընկերության կողմից կամ այդ նպատակով լիազորված մարմնին ճառագայթային դիտանցման համակարգի միջոցով տրամադրվելիք տվյալները պետք է լինեն հետևյալը՝

- դրսի ընկերության անվանումը և հասցեն,
- 80/836/Եվրատոմ հրահանգի 35-րդ հոդվածի համաձայն դրսի աշխատողի բժշկական դասակարգումը,
- վերջին պարբերական առողջության զննության ամսաթիվը,
- դրսի աշխատողի առանձին ճառագայթահարման դիտանցման արդյունքները:

ՄԱՍ III.

Տվյալները, որոնց մասին օպերատորը պետք է զեկուցի կամ պետք է զեկուցված լիներ այդ նպատակով լիազորված մարմնի կողմից ճառագայթային դիտանցման համակարգում ցանկացած աշխատանքից հետո պետք է լինի հետևյալը՝

- այդ աշխատանքով նախատեսվող ժամանակահատված,

- դրսի աշխատողի կողմից ստացված գործող դոզային գնահատում,
- ոչ միասնական ճառագայթահարման դեպքում դոզային գնահատում՝ համարժեք մարմնի տարբեր մասերին,
- ներքին աղտոտման դեպքում ընդունվող կամ սպասվող/ակնկալվող դոզայով վերցվող աշխատանքի գնահատական:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԱՌԱՆՁԻՆ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԴԻՏԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ I ՀԱՎԵԼՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Դրսի աշխատողների համար անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից տրամադրվող առանձին ճառագայթային դիտանցման փաստաթուղթը պետք է լինի ոչ փոխանցելի փաստաթուղթ:
2. I (2) Մասի I Հավելվածի համաձայն առանձին փաստաթղթերը տրամադրվում են անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից, որոնք յուրաքանչյուր առանձին փաստաթղթին տալիս են նույնականացման համար: